Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9903

W 2011

# ԻՏԸ

Հենրիկ Անդրէեւ

Թարգմ. Ե. Բակրճեան

891.71
Ա-57

17 JUL 2006
19 NOV.

ԼԷՕՆԻԴ ԱՍԴՐԼԵՆ

«Էջմիածնի» խմբագրատան
10/iii 1904. թվին

891
Ա-67
սկ.

# ՍՈՒՏԸ

(Հոգեբանական էտիւդ)

1001
345

Թարգմանեց Յակոբ Յակոբեան.

Թիֆլիս
Տպ. Կ. Թաւարթքիլաձէի, Կապալ. Ա. Մատեոսի-Յակոբեան
Սերգէևսկայա փող. № 1.
1904

12 .02. 2013

9903

Дозв. ценз. Тифлисъ, 21-го декабря 1903 года

# ՍՈՒՏԸ

## I

—Դու ստո՞ւմ ես, ես գիտեմ, դու ստում ես:

—Ինչո՞ւ ես բղաւում, մի՞թէ հարկ կայ որ ուրիշները մեզ լսեն:

Այս դէպքում էլ նա ստում էր, որովհետև իսկապէս ես չէի բղաւում, այլ խօսում էի ցածր ձայնով. նրա ձեռքը բռնած իմ ձեռքում, խօսում էի բոլորովին հանդարտ, և այդ թունաւոր «սուտ» խօսքը ֆշշում էր գլխումս ինչպէս վոքբիկ օձուկ:

—Ես սիրում եմ քեզ, շարունակում էր նա,—և դու պարտաւոր ես հաւատալ

ինձ։ Մի՞թէ իմ սէրը քեզ դեռ չի համոզել այդ բանում։ Եւ նա համբուրեց ինձ։ Բայց երբ ցանկացայ գրկել նրան և սեղմել թևերովս, նա արդէն անյետացած էր։ Նա փախաւ կիսամուշ միջանցքով, և ես նորից սկսեցի հետևել նրան մինչև այնտեղ, ուր սկսւում էր ուրախ տօնախմբութիւնը։ Ես մինչև անգամ չ'գիտէի, թէ ո՞րտեղ եմ գտնվում. ո՞րտեղից իմանայի. նա ինձ ասաց, որ ես գամ այստեղ, ես էլ եկայ. եկայ ու տեսայ, թէ ինչպէս ամբողջ գիշերը պտտւում են զոյգերը ու պարում։ Ոչ ոք չէր մօտենում ինձ, ոչ ոք չէր զրուցում ինձ հետ, և ամենքին ես օտար, նստած էի անկիւնում միայնակ, նւագածուների մօտ։ Ուղիղ դէպի ինձ էր ուղղած մեծ պղնձեայ երաժշտական բամբ խողովակի բերանը և այնտեղից փակւածին մէկը մռնչում էր և ամեն երկու րոպէից յետոյ անընդհատ կոպտաբար ծիծաղում՝ «խո՜... խո՜... խո՜...» Մի-մի անգամ մօտովս անցնում էր սպիտակ նրբաբոյր շրջազգեստի պէս մի ամպ. այդ նա էր։ Չէի հասկանում, թէ այդ ինչպէ՞ս էր նա կա-



րողանում ինձ փայփայել անցուդարձ անողներից ծածուկ, բայց մի ակնթարթում զգում էի, որ նրա ուսը սեղմւեց իմ ուսին, մի կարճ վայրկեանում, երբ նա խոնարհած էր աչքերը, տեսայ սպիտակ զգեստի բացւածքից դուրս նայող նրա սպիտակ պարանոցը. իսկ երբ բարձրացրի աչքերս, տեսայ նրա կիսադէմքը, այնպէս սպիտակ, խստալուրջ և կանոնաւոր, ինչպէս մի հրեշտակ, որ գլուխը խոնարհած, նայում է մարդկանցից մոռացւած դամբարանին։ Ես տեսայ և՛ նրա աչքերը. նոքա խոշոր էին, կեանքի կարօտ, գեղեցիկ էին և հանգիստ։ Ճրջապատւած կապտագոյն սպիտակոցով—նրա սև բիբերը փայփլում էին, և որքան էլ նայում էի, նոքա էլի նոյն սև բիբերն էին, նոյնքան խորամիտ, նոյնքան կապոյտ և նոյնքան անթափանցելի։ Մի գուցէ այնքան կարճատև նայեցի ես այդ բիբերին, որ նրա սրտին իմ հայեացքը չկարողացաւ մի որևէ զգացմունք հաղորդել—այնուամենայնիւ ոչ մի անգամ կեանքումս այնքան խորը, այնպէս ուժգին և զարհուրանքով

չեմ ըմբռնել՝ յաւիտենականութեան խոր-
հուրդը, որպէս այս անգամ։ Երկիւղն ու
սուր վիշտը արդէն ծանրացած սրտիս՝
ինձ թւում էր, թէ իմ ամբողջ էութիւնը
մի բարակ ճառագայթով անցաւ, հալեց
նրա աչքերի մէջ, հալեց մինչ այն աստ-
ղանն, որ թւաց ինձ, թէ ինքս այլևս
իմ մէջ չեմ ապրում, ինքս ինձ համար
օտար եմ, ոչնչացած և մեռած. հէնց այն
ժամանակ երբ ես ենթարկւած էի այդ
դրութեան, նա պոկւեց իմ հայեացքից,
տանելով իր հետ իմ ամբողջ կեանքը և
նորից սկսեց պարել մի ինչ որ բարձրա-
հասակ, հպարտ և գեղեցկադէմ տղամար-
դի հետ։ Ես դիտում և տնդղում էի նը-
րան, այդ տղամարդին իր բոլոր մանրա-
մասնութեամբ՝— նրա կօշիկների ձևը, վեր
բարձրացրած ուսերի լայնութիւնը, մազե-
րի համաչափ թափահարումը... իսկ նա
իր միակերպ անուշադրութեամբ կարծես
ինձ պատին էր սեղմում և թւում էր թէ
ես տափակւել և մոռացւել էի շրջապատող-
ներից այնպէս, ինչպէս այն պատը։



Երբ ճրագները սկսեցին մարել ես մօ-
տեցայ նրան ու ասացի՝

— Ժամանակ է տուն գնալու։ Ես ձեզ
կուղեկցեմ։

Բայց նա զարմացաւ.

— Ես պիտի նրա հետ գնամ, ասաց
նա, և ցոյց տւեց այն դեղեցիկ, բարձրա-
հասակ մարդուն, որը մեզ չէր էլ նայում։
Այդ ինձ տանելով մի դատարկ սենեակ,
սկսեց համբոյրներ տալ...

— Դու ստում ես— ասացի նրան ցա-
ծրը, շատ ցածր ձայնով։

— Մենք այսօր կտեսակցւենք և դու
պէտք է դաս ինձ մօտ անպատճառ, պա-
տասխանեց նա։

Երբ ես կառք նստած գնում էի տուն,
բարձր տանիքների գլխից նայում էր ցըր-
տաշունչ առաւօտեան կապտագոյն երկ-
նակամարը. և այդ ահագին փողոցում մի-
այն երկու հոգի էինք գնում, կառապանը
և ես։ Նա նստած էր գլխակոր, երեսը
թաղցրած, իսկ նրա մէջքի հետքևում
նստած էի ես, նոյնպէս գլխակոր, նոյն-
պէս երեսս ծածկած մինչի աչքերս։ Կա-

ռապանը ունէր իր մտածմունքները, ես՝ իմը, իսկ այնտեղ —հաստ պատերից դէնը քնած էին հազարաւոր մարդիկ, նրանք էլ իրենց երազանքները, իրենց մտածմունքները ունէին: Ես մտածում էի սիրելոյս մասին, և այն մասին՝ որ նա ստում է: Ես մտածում էի մահւան մասին և ինձ թւում էր թէ այդ վաղօրդեան լուսով փայլող պատերը արդէն տեսել են իմ մահը և հէնց այդ է պատճառը, որ կանգնած են այնպէս ուղղաձիգ և այնքան դժգոյն սառնութեամբ: Չգիտեմ սակայն, ինչ էր մտածում կառապանը: Չգիտեմ, ինչի մասին էին ցնորում ու մտածում պատերի յետքև թաղնուած մարդիկ. բայց, դէ, չէ՞ որ նրանք էլ չգիտէին ինչի մասին եմ ցնորում ու մտածում ես ինքս:

Եւ այդպէս մենք սլանում էինք երկար և ուղիղ փողոցներով, իսկ առաւօտը հետզհետէ բարձրանում էր կտուրների գլխից և այն ամենը որ շրջապատում էր մեզ, լուռ էր, անշարժ և միակերպ սպիտակ: Անուշաբոյր սառած ամպը նորից մօտենում էր ինձ և կարծես մէկը ուղղակի



ականջիս մէջ ծլնդաղում էր մի ինչ որ խեղդուած ձայնով՝ «խո... խո... խո...»

---

## II

Նա խափեց ինձ: Նա չեկաւ և ես իզուր սպասում էի նրան: Մոխրագոյն, միակերպ սառած կիսախաւարը իջնում էր մթին երկնակամարից և ես չիմացայ անգամ՝ երբ վերջալոյսը փոխուեց երեկոյի, իսկ երեկոն գիշերի, և թւում էր, որ այս ամենը լոկ մի երկար գիշերի է նման: Նոյն միանման, համաչափ քայլերով անհամբեր և երկար սպասողի դրութեան մէջ—ես անցնում էի յետ ու առաջ: Ես չէի մօտենում ոչ այն բարձր տան, ուր ապրում էր իմ սիրելին և ոչ նրա բնակարանի ապակեայ դրանը, որը պատսպարուած էր դեղին երկաթէ հովանոցով, այլ հէնց մի գլուխ նոյն միատեսակ, համաչափ քայլերով անցուդարձ էի անում հակառակ ուղղութեամբ. յետ ու առաջ, յետ ու առաջ: Երբ

ես քայլում էի առաջ, այդ ժամանակ աչքը չէի հեռացնում նրա ապակեայ դրոնից, իսկ յետ քայլելուց մի մի անգամ կանգ էի առնում, յետ էի նայում և այդ ժամանակ սուր ասեղի պէս ձիւնը ծակծկում էր երեսս, և այդ սուր ու սառը ասեղները այնքան երկար էին, որ թափանցելով սրտիս խորքերը, ծակծկում էին նրան, պատճառելով ինձ տխրութեան հետ միասին և զայրոյթ ապարդիւն սպասելուս համար։ Լուսաճաճանչ հիւսիսից դէպի մութ հարաւը ազատ սլանում էր սառը քամին, սուլելով, խաղում էր սառցապատ կտուրների հետ, և պոկելով բարձրութիւնից, կտրում էր երեսս սուր ու մանր ձիւնահատիկներով, զարկւում էր դատարկ լապտերների ապակիներին, ուր միայնակ, ցրտից դողդողալիս լամպարի դեղին բոցը հետզհետէ նւաղում, հեծկլտում էր — և իմ խեղճն էր դալիս այդ մենաւոր բոցը, որը ապրում էր միայն գիշերը, և մտածում էի ես, որ ահա այս բոպէին, երբ ես կըհեռանամ այստեղից, նրա ամբողջ կեանքը կհալւի հէնց այս փողոցում, և միայն



ձիւնի հատիկները կսլանան դատարկ տարածութեան մէջ, իսկ դեղին բոցը դողդողալով կամաց-կամաց կհալւի մենակութեան և ցրտի մէջ, մինչև որ բոլորովին կմարի։

Ես սպասում էի նրան և նա չէր գալիս։

Ինձ թւում էր, որ այն միայնակ լամպարի բոցը և ես շատ նման էինք միմեանց, այն դանդաղութեամբ միայն, որ իմ լապտերը դիմացինիս պէս դատարկ չէր։ Այն տարածութեան վրայ, որը ես չափչփում էի իմ անվերջ քայլերով, մէկմէկ մարդիկ էին երևում։ Նոքա լուռ ու մունջ յանկարծ լոյս էին ընկնում իմ յետքևում, շարժւում, երերում էին, անցնում կողքովս ու յանկարծ անյետանում բարձր սպիտակ տան անկիւնի սուր ծայրում, ինչպէս ուրւականներ։ Նորից դուրս էին գալիս անկիւնի յետքևից, մօտենում, հաւասարւում էին ինձ հետ և դանդաղորէն կրկին հալւում, կորչում մռայլ տարածութեան մէջ, որ ծածկւած էր աղմուկ չհանող, շարժուն, փափուկ ձիւնով։ Փա-

թաթաւած տձև, լռակեաց այդ մարդիկ նման էին միմեանց։ Նոքա նման էին և՛ ինձ. և թւում էր, որ մի քանի տասնեակ մարդիկ քայլում են յետ ու առաջ, ինչպէս ես, որ նոքա ևս սպասում են, սառսռում են ցրտից, բայց յամառութեամբ լռում են, ինչպէս ես, թւում էր, որ նոքա էլ մտածում են մի ինչ որ իրենց անհասկանալի տխուր բանի վրայ։

Ես *նրան* սպասում էի և նա չէր գալիս։

Չգիտեմ, ինչո՞ւ ես չէի աղաղակում, ինչո՞ւ ես չէի արտասուում սրտիս կսկիծից։ Հասկացայ անգամ թէ ինչո՞ւ ես ծիծաղեցի, ինչո՞ւ ուրախացայ և մատներս այնպէս սեղմեցի, որ ասես թէ նոքա չանդեր լինէին և թւաց ինձ, որ այդ մատներով բռնած ունեմ այն փոքրիկ և թունաւոր բանը—սուտը,—որը ֆշշում է ինչպէս օձուկ։ Ահա նա գալարուեց իմ ձեռքերում և սկսեց խայթել սիրտս և նրա թոյնից գլուխս սկսեց շշմել, պրտրտուել։ Ամենը ուրեմն սո՞ւտ էր։ Մի վայրկեանում անհետացաւ այն մօտիկութեան սահմանը, որ



տարածւած էր ապագայի և ներկայի մէջ, ներկայի և անցեալի մէջ։ Անհետացաւ այն ժամանակի մերձաւորութիւնը, երբ ես դեռ չէի ապրում, և այն ժամանակի, երբ ես սկսել էի ապրել, և ինձ թւում էր, որ ես ապրել եմ յաւիտեան, կամ չեմ ապրել երբէք։ Եւ միշտ, երբ ես չէի ապրած, կամ երբ դեռ նոր էի սկսել ապրել, նա միշտ տիրապետում էր իմ սրտին և ինձ տարօրինակ էր թւում այն, որ նա ունի անուն և մարմին, անհասկանալի էր ինձ համար այն, որ նրա էութեան մէջ գոյութիւն ունի սկիզբ և վախճան։ Նա անուն չունէր, բայց նա միշտ այն էր, որը ստում է, այն էր, որը յաւիտեան ըսպասել է տալիս—բայց դարձեալ չի գալիս։ Եւ չգիտեմ ինչու, բայց ես ծիծաղում էի և ձիւնեայ ասեղները ցցւում էին սրտիս մէջ, իսկ ականջումս ուղղակի ծիծաղում էր այն խեղճուած ձայնը՝ «խո՜... խո՜... խո՜...»

Աչքերս վեր յառելով, ես տեսայ լուսաւորուած բարձր տան պատուհանները և

նրանք իրենց կապույտ ու կարմիր լեզուով ինձ կամացուկ ասում էին՝

—Նա քեզ խաբե՞ց։ Այս բոպէին, երբ դու միայնակ թափառում ես, սպասում և տանջւում ես, նա աւելի գեղեցկացած, աւելի հմայիչ դարձած, նա, այդ ստախօսը, գտնւում է այստեղ և ականջ է դնում այն ամէնին, ինչ որ շշնջում է բարձրահասակ և գեղեցկադէմ տղամարդը, այն տղամարդը, որը ատում է քեզ։ Եթէ դու ներս սլանաս և այս բոպէիս սպանես նրան, դու մի շատ լաւ գործ կըլինես կատարած, ինչու որ այդպիսով դու սպանած կլինէիր սուտը։

Ես ամուր սեղմեցի բռունցքս, որով բռնած էի դանակը և դառն հեգնանքով պատասխանեցի.

—Այո, ես նրան կսպանեմ։

Սակայն պատուհանները նայում էին ինձ տխրութեամբ և աւելացնում էին՝

—Բայց դու երբէք նրան չես սպանիլ. երբէք. որովհետև այն զէնքը, որ այժմ բռնած ես ձեռքումդ նոյնպիսի սըտութիւն է, որպէս և նրա համբոյրները։



Վաղուց արդէն չքացել էին սպասողների համբ ստերները և սառը տարածութեան մէջ մնացել էի մենակ ես, մէկ էլ ցրտից և յուսահատութիւնից դողդողացող մենաւոր կրակի լեզուները։ Ոչ այնքան հեռու եկեղեցոյ զանգակատան բարձրութիւնից յանկարծ սկսեց հնչել ժամացոյցի զանգը. նրա տխրութիւն ազդող մետաղեայ հնչիւնը դողդողում, լացում էր, արձագանք տալով հեռաւոր տարածութեան մէջ, և վերջը մարում անթիւ, անհեթեթ պըտոյտներ գործող ձիւնեայ քուլաների մէջ։ Ես սկսեցի համարել ժամացոյցի զարկերը և... ծիծաղեցի։ Ժամացոյցի զանգը զարկեց տասնըհինգ։ Զանգակատան խարխուլ ժամացոյցն էլ իրեն պէս հին էր, և թէև սլաքը ժամանակը ուղիղ էր ցոյց տալիս, այնուամենայնիւ զարկերը շարունակւում էին անընդհատ, անհաշիւ, երբեմն էլ այնքան շատ, որ ծերուկ ժամկոչը ստիպւած էր լինում բարձրանալ զանգակատան գըմբէթը և ձեռքով բռնելով, կանգնացնել դողդոջուն ու տենդոտ զարկ տուող լեզուակը։ Ո՞ւմ համար էին ստում այդ դողդո-

ջուն, զառամեալ, տխուր հնչիւնները, որոնք այնպէս խեղտուած ու ճնշուած էին խաւար սառնամանիքից։ Որքան խղճալի, որքան անմիտ էր այդ ոչոքին չրհարկաւոր սուտը։

Եւ ժամացոյցի վերջին սուտ զարկի հետ միասին շրրխկաց ապակեայ դուռը և նրա սանդուղքներով իջաւ մի ինչ որ բարձրահասակ մարդ։ Ես թէև նրա միայն մէջքը տեսայ, բայց և այնպէս ճանաչեցի այդ մէջքի տիրոջը, որովհետև հէնց երեկ էի տեսել նրան. նրան, այդ ատելի գոռոզին։ Ես ճանաչեցի նրա քայլուածքը. այդ քայլուածքը աւելի թեթև, աւելի ինքնագոհ և աւելի ինքնավստահ էր, քանց երէկ. ճիշտ այդպէս, ես էլ քանիցս հեռացել եմ այդ դռնից։ Այդպէս են քայլում այն մարդիկ, որոնք քիչ առաջ համբոյրներ են լինում ստացած կանացի ստախոս շրթունքներից։

---



ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐՍ
C.C.P.A. ПРОКУРАТУРА
7/XI. 1922
1001/345

III

Ատամներս կրճտացնելով ես սպառնում էի նրան, ես պահանջում էի՝

—Ասա՛ ինձ ճշմարտութիւնը։

Եւ ճիւնի պէս սառած դէմքով վեր քաշած յօնքերով, որոնց տակ առաջւայ պէս անբացատրելի կերպով փայլում էին անհասկանալի սև բիբերը. նա զարմացած հարցրեց՝

—Բայց մի՞թէ ես քեզ խափում եմ։

Նա գիտէր, որ ես չեմ կարող ապացուցանել, որ ինքը խափում է, գիտէր որ իմ գաղտնիքն իմանալու բոլոր ջանքերը կարող էին միանգամից փշրուել, եթէ նա էլի մի աւել խօսք ասէր—նորից մի «սուտ» խօսք։ Եւ ես սպասում էի այդ խօսքին և այդ խօսքն էլ դուրս թռաւ նրա շրրթունքներից. այդ խօսքը, որ դրսից փայլում էր իր մակերևոյթային զեղեցկութեամբ որպէս ճշմարտութիւն, իսկ ներսից որ իր խնդութեան մէջ բովանդակում

էր ինչ որ կասկածելի մթութիւն—հետեւեալն էր՝

— Ես քեզ սիրում եմ։ Չէ՞ որ ես քեզ եմ պատկանում միայն։

Մենք քաղաքից մի շատ հեռու տան մէջ էինք գտնւում, և նրա մթին պատուհանները նայում էին ձիւնապատ դաշտին։ Խաւարը պատել էր դաշտը. թանձրը, անշարժ, համր խաւար. սակայն ձիւնապատ դաշտը դարձեալ փայլում էր իր խորհրդաւոր լոյսով, ճիշտ այնպէս, ինչպէս մեռեալի դէմքը մթութեան մէջ։ Մեծ, սաստիկ տաքացրած սենեակի մէջ վառւում էր միայն մոմը և նրա կարմիր շառաւիղի ցոլքը ընկել էր դունատ, մեռած դաշտի վրայ։

— Որքան էլ ճշմարտութեան լմանալը դառն լինի, այնուամենայնիւ ես ուզում եմ նրան լմանալ։ Կարելի է, որ նոյն իսկ մեռնեմ էլ, հէնց որ լմանամ, բայց մահը գերադասելի է, քան ճշմարտութեան չլմանալը։ Զգում եմ, որ քո համբոյրներին և գրկախառնութեան մէջ թագնւած է սուտը. քո աչքերի մէջ տեսնում եմ նը-



րան։ Սա՛ ուրեմն ինձ ճշմարտութիւնը և ես միանգամայն կհեռանամ քեզնից—աղաղակում էի ես։ Բայց նա լուռ էր, և նրա ցուրտ, բայց նուրբ դիտող հայեացքը թափանցելով ներսս, շուռ տւեց հոգիս, որովհետէ տարօրինակ, կասկածելի հետաքրքրութեամբ զննում էր ինձ։ Եւ այդ ժամանակ միայն ես ուժգին գոռացի.

— Կամ պատասխանիր, կամ ես քեզ կսպանեմ։

— Սպանի՞ր, առանց վրդովմունքի պատասխանեց նա։ Երբեմն կեանքը այնքա՛ն տաղտկալի է դառնում... բայց միթէ սպառնանքով կարելի է ճշմարտութեան հասնել։ Եւ այդ ժամանակ ես չոքեցի նրա ոտների տակ։ Սեղմելով նրա ձեռքերը արտասուքն աչքերիս ես աղերսում էի խնայել ինձ և ճշմարտութիւնը ասել։

— Խե՜ղճ, փաղաքշում էր նա ինձ ու ձեռքով շոյում մազերս—խե՜ղճ։

— Խղճահարելիր ուրեմն, աղերսում էի նորից։ Ես այնպէ՞ս ցանկանում եմ ճշմարտութիւնը լմանալու։ Եւ ես նայում էի նրա մաքուր ճակատին և մտածում, որ

ահա ճշմարտութիւնը այնտեղ է, այն բարակ խոչնդոտի տակ և կատաղաբար կամենում էի սրկել նրա դանդը, որպէս զի տեսնէի ճշմարտութիւնը։ Ահա այնտեղ, այն սպիտակ կրծքի տակ բաբախում է նրա սիրտը, և ես խելագարի պէս կամենում էի պատառոտել նրա կուրծքը, զոնէ մի անգամ տեսնելու մարդկային մերկացած սիրտը։ Եւ համբութեամբ, դանդաղօրէն տեղին էր տալիս կիսավառ մոմի սուր կրակը և հետզհետէ մարելով, կարծես պատերը բաժանում միմեանցից։ Եւ այդ ժամանակ սրտիս տիրեց այնպիսի մի թախծալի մենակութիւն, այնպիսի մի սոսկալի մեռելային տխրութիւն և անձկութիւն, որ կարծես ահա՜ ահա՜ պիտի խեղդուեմ։

—Խե՜ղճ, երկնում էր նա, խե՜ղճ։

Սառսրռելով և տատանուելով ընկաւ մոմի դեղին կրակը, կապտեց և ապա բոլորովին հանգաւ.—խաւարը շրջապատեց մեզ։ Ես չտեսայ ոչ նրա երեսը և ոչ նրա աչքերը. դրկել էր գլուխս և ես այլ ևս չէի զգում ստի ներկայութիւնը։ Աչքերս



խփելով, ես չէի մտածում, չէի ապրում, ես միայն ծծում էի նրա մերձաւորութեան քաղցրութիւնը, զգում էի նրա ձեռքերի շփումը և ինձ թւում էր, որ այդ ամենը անկեղծ է, ճշմարիտ է։

Եւ մթութեան մէջ մեղմ լսւում էր նրա դողդոջուն և անվստահ շշուկը՝

—Գրկիր ինձ, ես սարսափում եմ։

Եւ նորից տիրում էր լռութիւնը ու նորից լսւում նրա մեղմ դողդոջուն շշընջիւնը.

—Դու կամենում ես իմանալ ճշմարտութիւնը—բայց ինչպէս, քանի որ ինքս անգամ չգիտեմ նրան։ Եւ մթթէ ես ինքս չեմ ցանկանում գիտենալ նրան. օ, ինչպէ՜ս սարսափելի է, պաշտպանիր ինձ... Սարսափելի՜ է։

Ես բացի աչքերս. սենեակի դժգոյն խաւարը վախվխելով փախչում էր բարձր պատուհանների մօտից և քաշւում պատերին, թաղնւում սենեակի անկիւններում, իսկ պատուհանների շրջանակի միջից լուռ նայում էր մեզ մի լինչ որ մեծ, կիսամեռ լոյս։ Թւում էր թէ, մի որևէ մեռածի

խաւար աչքերն են մեզ փնտռում որ փաթաթեն մեզ իրենց ցուրտ թևերի մէջ։ Դողով բռնուած՝ մենք էլ աւելի ամուր սեղմուում էինք միմեանց կրծքին, ուր նա շարունակ կրկնում էր շշնջալով՝

—Օ՜, որքա՜ն սարսափելի է։

---

## IV

Ես նրան սպանեցի։ Ես սպանեցի նրան և երբ նրա մարմինը թուլացած ու տափակ մաստակի պէս ընկած էր այն պատուհանի մօտ, որի յետքևում սպիտակին էր տալիս մեռած դաշտը, ես ոտս դնելով նրա դիակի վրայ, կանգնեցի և բարձրաձայն ծիծաղեցի։ Այդ խելագարի ծիծաղ չէր, օ, ո՛չ։ Ես ծիծաղեցի նրա համար, որ այդ ժամին կուրծքս շնչում էր, հաւասար և թեթև, նրա համար, որ կրծքիս առակ տիրում էր ուրախութիւն, ամայութիւն և անդորրութիւն, մի խօսքով սրտիցս պոկուել, ընկել էր այն ճի-



ճուն, որը կրծում էր նրան։ Ես խոնարհելով գլուխս, նայեցի նրա մեռած աչքերին. խոշոր, կեանքի ձգտող այդ աչքերը մնացել էին բաց, սառած, ճիշտ այնպէս, ինչպէս մոմէ տիկնիկի աչքերը—նոյնքան կոլոր, նոյնքան մարած, կասես սառած լինէին բարակ սառցային թաղանթով։ Ես մինչև անգամ կարողանում էի նրանց շօշափել մատներովս, բաց ու խուփ անել և այդ բանից ես չէի սարսափում, որովհետև այն սև, անթափանցելի բիբերի մէջ այլևս չէր ապրում այն ստի և կասկածի դևը, որը այնքան երկար, այնքան ագահաբար ծծում էր իմ արիւնը։

Երբ ինձ ձերբակալեցին, ես սկսեցի ծիծաղել. և ինձ ձերբակալողներին իմ ծիծաղը չափազանց սոսկալի և վայրենի երևաց։ Մի քանիսը նողկանքով երեսները ինձնից շուռ տուին և քաշուեցին մի կողմ։ Միւսները սպառնական ձևով ու կշտամբանքով ուղղակի վրաս եկան, բայց երբ ես նրանց աչքերի մէջ նայեցի ուրախ և պայծառ հայեացքով, նրանց երեսը իսկոյն

սպրտնեց և մնացին տեղն ու տեղը քարացած՝ կանգնած։

—Խելագարուա՞ծ է,—ասացին նրանք և ինձ թուաց, թէ այդ խօսքը նրանց մըխիթարում է, որովհետև այդ խօսքն էր որ նրանց օգնեց հանելուկը ըմբռնելու—այն է՝ որպէս սիրահար ես կարող էի ըսպանել իմ սիրելուն և ծիծաղել։ Եւ միայն մի հաստաբուն, կարմրաթուշ և ուրախ մարդ ինձ անուանեց ուրիշ խօսքով, և այդ խօսքը այնպէս հարուածեց ինձ, որ աչքերիս առաջ լոյսը մթնեց։

—Խե՜ղճ մարդ. ասաց նա կարեկցութեամբ և առանց զայրոյթի. ասում եմ առանց զայրոյթի, որովհետև նա հաստակազմ և ուրախ մարդ էր։

—Խե՜ղճ։

—Հարկաւո՞ր չէ, զոռացի ես. հարկաւոր չէ ինձ այդպէս անուանել։

Եւ չգիտեմ ինչու ես յարձակուեցի դէպի նա։ Ի հարկէ ես չէի ուզում նրան սպանել և ոչ ձեռք բարձրացնել անգամ, բայց այն բոլոր միւս ահաբեկուած մարդիկ, կարծելով թէ ես իսկապէս խելագար եմ



և չարագործ, էլ աւելի շատ վախեցան և սկսեցին այնպէս հարայ-հրոց բարձրացնել, որ նորից ծիծաղս եկաւ։

Երբ ինձ դուրս հանեցին սենեակից, ուր ընկած էր դիակը, ես նայելով այն ուրախ և հաստակազմ մարդու վրայ, բարձրը և համոզուած տօնով կրկնում էի՝—

—Ես բաղդաւո՞ր եմ, այո՛, ես բաղդաւո՞ր եմ։ Եւ այդ էր ահա զուտ ճշմարտութիւնը։

---

## V

Մանկութեանս օրերում միանգամ գաղանոցում ես տեսել էի յովազին, որը սաստիկ ապդեց իմ երևակայութեան վրայ և երկար մտատանջութեան ենթարկեց ինձ։ Նա նման չէր այն միւս գաղաններին, որոնք ապուշի պէս կամ ննջում էին, կամ կատաղաբար նայում այցելուներին. մի անկիւնից միւս անկիւն, միևնոյն ուղիղ գծով, թւաբանական ճշտութեամբ քայլում

էր նա, ամեն անգամ շուռ գալով միևնոյն տեղում, ամեն անգամ իր ոսկէպոյտ կողքով քսելով մետաղեայ վանդակի միևնոյն ձողակին։ Նրա դիշատիչ, սուր գըլուխը միշտ գետնին էր նայում, նրա աչքերը միշտ իր առաջ էին սևեռած և երբէք ոչ մի անգամ ոչ մի կողմ չէին դառնում։ Նրա վանդակի առաջ ամբողջ օրերով խմբւում էր ամբոխը, խօսում էր, աղմկում, բայց նա միշտ քայլում էր և ոչ մի անգամ նրա աչքերը իրեն նայողներին չէին ուղղւում։ Եւ ամբոխից շատերը հեգնում էին նրան. մեծամասնութիւնը լրջութեամբ և մտահոգ կերպով էր նայում այդ ծանր, անելանելի մտախոհութեան կենդանի պատկերին և հառաչելով հեռանում էր, իսկ հեռանալուց մի վերջին անգամ ևս նրանք տարակուսած, լարած ուշադրութեամբ յետ էին նայում, դիտում և հառաչում, կարծես թէ իրենց՝ ազատ մարդկանց և այդ դժբաղդ, գերի ընկած դազանի վիճակի մէջ կար մի ինչ որ նըմանութիւն։ Եւ երբ յետադայում ինձ, հասակս առածիս հետ, գրքերը և մարդիկ



սկսեցին խօսալ յաւիտենականութեան մասին, ես յիշեցի այն յովազին և ինձ թւաց թէ ես արդէն ճանաչում եմ յաւիտենականութիւնը իր չարչարանքներով հանդերձ։

Եւ ես իմ քարեայ վանդակի մէջ փակւած բանտում նման էի այդ յովազին։ Վանդակիս մէջ ես քայլում էի մի որոշ ուղղութեամբ շեղ գծով, անկիւնից անկիւն և նոյն կարճ գծով ինձ հետ քարշ էին դալիս իմ մտքերը, այնքան ծանր, որ կարծես ոչ թէ գլուխս, այլ ամբողջ աշխարհադունդն եմ կրում ուսերիս. միայն մի խօսքից էր կազմւած այդ մտատանջութիւնը, բայց ի՞նչպիսի մեծ, ի՞նչպիսի տանջող, ի՞նչպիսի չարագուշակ խօսք էր այդ.— «սուտ» — այդպէս էր կոչւում նա։ Ու էլի նորից ֆշշացնելով, սողալով դուրս ընկաւ նա բանտիս բոլոր անկիւններից և փաթաթւեց վզովս, բայց նա այլևս առաջւայ փոքրիկ օձուկը չէր, այլ մեծացել, տարածւել ու փոխւել էր կատաղի օձի։ Եւ խայթում էր, և՛ խեղդում էր ինձ իր երկաթէ օղակներով. և երբ ես սկսեցի

կսկիծից բղաւել՝ իմ բացուած բերանից դուրս էր թռչում նոյն զզուելի, սուլող, օձային հնչիւնը—սուտը, որը նման անթիւ սողունների, ֆշշում էր կրծքիս տակ։

Եւ ես քայլում ու մտածում էի և իմ աչքիս առաջ մոխրագոյն, հարթ, ասֆալտեայ յատակը փոխւում էր գորշագոյն թափանցիկ վիհի։ Այնուհետև թւում էր թէ ոտներս գետնին չեն կպչում, այլ ես սլանում եմ անսահման բարձրութեան՝ մշուշի ու խաւարի մէջ։ Եւ երբ կուրծքս յափշտակւած էր սուլող օդի հեծեծանքով, այնտեղ ինձնից ցածր, այն նօսր, բայց և անթափանցիկ շղարշի տակ դանդաղօրէն հնչում էր սարսափելի արձագանքը իմ հառաչանքի, այնքան դանդաղօրէն, խուլ ձայնով, որ կարծես թէ այդ ձայնը անցած լինի հազարաւոր տարիների միջով և որը ամեն մի վայրկեանում և ամեն մի մշուշի մասնիկում կորցնում էր իր ոյժը։ Ես հասկանում էի որ այնտեղ ցածրում նա սուլում էր ինչպէս սուր քամի, որ կտրում է ծառեր, բայց իմ ականջում



նա հնչում էր մի այլ չարագուշակ շշուկով՝

—Սուտ։

Այդ զզուելի շշուկը ինձ հասցնում էր ծայրահեղ զայրոյթի և այդ բոպէին ոտքս կատաղաբար զարկում էի ասֆալտէ քարին և բղաւում՝

—Սուտը էլ գոյութիւն չունի. ես ըսպանեցի ստին։ Եւ դիտմամբ քաշւեցի մի կողմ, լաւ իմանալով, որ արձագանքը ինձ կըպատասխանի. և իրաւ, նա ինձ պատասխանեց ծանր, դանդաղօրէն, կարծես անհուն խորութիւնից՝

—Սուտ է։

Բանը, ինչպէս տեսնում էք, այն էր, որ ես չարաչար սխալւած էի. կինարմատին մեռցրի, իսկ ստին անմահացրի։ Ո՛չ, մինք սպանիլ կանանց, մինչև որ աղերսանքով է, տանջանքով է, թէ կրակով, դուրս չքաշէք նրանց սրտից ճշմարտութիւնը։ Այդպէս էի մտածում ես և այդպէս էլ մտածելով քայլում էի վանդակիս մէջ շեղ գծով մի հակառակ անկիւնից միւս անկիւն։

ՀՍՍՀ Գրականության և արվեստի թանգարան
7/XI 1922

## VI

Մռայլ ու սարսափելի է այն տեղը, ուր նա իր հետ տարաւ և՛ ճշմարտութիւնը և՛ սուտը—ես էլ իհարկէ նրա հետեւից կըգնամ, կըհասնեմ նրան սատանայի գահի մօտ, ծնկաչոք կըլացեմ, կաղաչեմ՝

—Սա՛ նա՛ ճշմարտութիւնը։

Բայց Աստուած իմ, չէ՞ որ այդ ևս սուտ է։ Այնտեղ տիրում է խաւարը, դարերի և յաւիտենականութեան ոչնչութիւնը։ Այնտեղ և ամենուրէք նա, ճշմարտութիւնը գոյութիւն չունի. բայց սուտը ապրում է. նա անմահ է։ Ես նրա՛ն տեսնում եմ օդի ամեն մի հիւլէի մէջ, և երբ ես շունչ եմ քաշում, նա օձի պէս ֆշշալով սողում է դէպի կուրծքս և յօշոտում է նրան ու պատառոտում սիրտս։

Օ՜, որպիսի յիմարութիւն է ադամորդի լինել և ճշմարտութիւնը փնտռել. ի՜նչ անտանելի ցաւ է։

—Օգնեցէ՛ք ինձ, փրկեցէ՛ք ինձ...

---

«Ազգային գրադարան»
NL0311292

*Լոյս են տեսել*

*Ց. ՑԱԿՈԲԵԱՆԻ*

1. Բանաստեղծութիւններ (սակաւաթիւ) 30 կ.
2. Այդ Նեզրի (մի քանի օրինակ) . 30 կ.
3. Սուտր. Լ. Անդրեեւի . . . . . 7 կ.

Գինն է 7 կոպ.

Շուտով լոյս կըտեսնի

*ԱԴԱ ՆԵԶՐԻՆ Ք. պրակը*